

891 7105

Ի. ԲԵԶՐՕԴՆԵՅԵ

Բ 42

180



ԲԱՐԵՍԻՐՏ ԳՈՂԻԱԹԸ

Թարգմ. Կար. Միրխանեան.

№ 9

Գինը յենկ կոպ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆսկայնա փող. 6

1911

2724

30 MAY 2011

04.03.2013. ԲԵՋՐՕԳՆԵՆ

891.710. 16

F-42

ԲԱՐԵՍԻՐՏ ԳՈՂԻԱԹԸ

1001 3858

ԳԻՆԸ ՏԵԿ ԿՈՊ.

Թարգմ. Կ. Մխրիանեան.

№ 9

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԵՆ» Գրաֆակայեա փող. 6.

1911

Արտատպած «Հասկեր»-ից



ԲԱՐԵՍԻՐՏ ԳՈՂԻԱԹԸ

I

Մի օր փղերի հօտը ծեր առաջնորդ փղի պահպանութեան ներքոյ մուշ-մուշ արեւ կող էր անում լծի ափին, կանաչի վրայ: Յանկարծ այս ու այն կողմից մարդիկ երեացին:

Փղերը զարմացած նայում էին տարօրինակ եկեղորներին, որոնք կամաց-կամաց դուրս էին գալիս անտառի յետեից, իջնում էին սարից, երևում էին նաև լծի յետևում: Բայց հօտի առաջնորդը, որ անագին ժանիքներով զինւած մի փորձւած ծեր փղի էր, իսկոյն հասկացաւ վերահաս վտանգը ու բարձրաձայն գոռաց:

Միւս փղերն էլ ձայնակցեցին նրա խոնոյին, անասելի ժխոր բարձրացաւ. ամեն շունչ կենդանի կսարսափէր այդ գոռոցից: Բայց մարդիկ չէին վախենում, աւելի ու աւելի առաջ էին գալիս, մօտենում խոնոյ փղերին, ասես ուզում էին շրջապատել, օղակի մէջ առնել նրանց. վերջապէս, մարդկանց խմբից դուրս եկաւ մի կտրին տղամարդ, պառաւ փորձւած էջ փղի վրայ նստած:

Մուլլին, այսպէս էր պառաւ փղի անունը, շատ անգամ էր օգնել մարդկանց իր ցեղակիցներին որսալիս. նա այնպէս ճարպիկ կերպով կարողանում էր խաբել վայրենի փղերին, որ իր մէջքին նստող որսորդին մնում էր միայն հետեւել նրա խորամանկ շարժ ու վարմունքին:

Եւ ահա Մուլլին սկսեց անց ու դարձ անել լճի ափին. երբեմն էլ կանգ էր առնում և անհոգ կերպով շուր խմում լճից. նա այնպէս ուրախ էր շարժում կնճիթը, որ փղերից մի քանիսը խաբւելով մօտեցան նրան, թէ և ծեր առաջնորդը բղղում էր տխուր ու բարկացած, կարծես ուզում էր ասել.

— Ընկերներ, զգուշացէ՛ք այդ դաւաճանից, նա խորամանկութիւն է բանեցնում. նա էլ մեր ընկերը չէ, այլ մարդկանց կողմն է անցած:

Բայց ջահել փղերը այնպէս ուրախացան զւարթ Մուլլին տեսնելով, որ էլ ականջ չարին ծերի նախազգուշացումներին: Նրանք չնկատեցին, թէ ինչպէս վարիչը ցած թռաւ Մուլլի մէջքից ու թագ կացաւ նրա ոտի յետեր, հաստ պարանը ձեռքին: Միամիտ փղերը արդէն կնճիթները վեր ցցած բարկում էին անծանօթ Մուլլին, որ յանկարծ պարանը փաթաթեց մի փղի

ոտին. և մինչ դեռ գերի ընկածը դռում էր գայրոյթից, պարանը միւս ոտին էլ փաթաթեց:

Շփոթ ու աղմուկ ընկաւ փղերի մէջ. նրանք վայրագ կերպով բղղում, ոռնում էին ընկերոջ վայնասունը լսելով. բայց բանը բանից անցել էր, դերի ընկածի ժամը դուրս էր եկել. նա տխուր տրտում տեսնում էր, թէ ինչպէս իր ընկերները, մէկիկ-մէկիկ փախչում էին շրջանից. տեսնում էր, և աչքերը լցում էին արտասուքով:

— Դէ, մատաղ, երթանք, — ասաւ այն ժամանակ որսորդը պարանը բաշելով, իսկ վայրի դերին բղղում էր հա բղղում և չէր շարժում տեղից:

— Մի վախի՛ր, — կարծես ասում էր Մուլլին ամաչելով, — չես կորչի. ահա հարիւր տարուց աւելի է, որ ապրում եմ մարդկանց մօտ և ոչ մի վատ բան չեմ տեսել նրանց ձեռքից:

— Սպասի՛ր, ես քո հախիցը կգամ, — ոռնաց դերին՝ կնճիթը բարձրացնելով. բայց հէնց այդ ժամանակ մարդիկ շրջապատեցին նրան, իսկ վարիչը հեռացրեց տարաւ վախեցած Մուլլին:

— Կատարեալ հոկա՛յ է, — բացականչեց խմբապետը: — Ուղղակի Գողիաթ է: Ժանիքներից երեւում է, որ ջահել է դեռ, բայց ինչ վիթխարի բան է... Արի, անունը Գողիաթ դնենք:

Այդպէս էլ կոչեցին նրան:

II

Գերի Գողիաթին աշխատում էին ընտերացնել նրան սովորեցնում էին ջուր կրել, գերաններ դարսել, վրանը մեջքին դաշտ գնալ, քարեր կրել և շատ ու շատ ուրիշ բաներ անել, մի խօսքով, սովորեցնում էին այն ամենը, ինչ որ սովորեցնում են ընտանի փղերին: Վարիչը սիրեց Գողիաթին, որովհետև նա ուշիմ ու հեզ էր. բայց երկար ժամանակ չէր կարողանում ստրկութեան սովորել և Մուլլին հանդիպելիս աշխատում էր վրէժխնդիր լինել նրանից:

Մի օր Գողիաթը, սովորականի պէս, իր ընկերների հետ եկել էր ջրհորը մի դոյլ կնճիթին: Երբ հերթն իրեն հասաւ, սկսեց ջուր հանել, կրնճիթը պարանի պէս ծառայեցնելով. նա սկսեք է մի մեծ տակառ լցնել:

Համարեա վերջացրել էր իր գործը, որ մէկ էլ փղերի մի այլ խմբում նկատեց դաւաճան Մուլլին. նա էլ հանդարտօրէն ջուր էր հանում:

— Տուն գնանք, մատաղ, — ասաւ վարիչը Գողիաթին, չիմանալով որ վրէժխնդրութեան ծաւալը այրում, փոթոթում էր Գողիաթի սիրտը:

— Հը, ոտքդ շարժիր, — կրկնեց վարիչը:

Բայց Գողիաթը փոխանակ նրան լսելու, յար-

ձակեց Մուլլի վրայ ու հրեց ուժգին: Մուլլին, որ այդ ժամանակ, գլուխը ջրհորը կոխած, դոյլն էր հանում, գլորեց, ընկաւ ջրհորը: Իսկ Գողիաթը փախաւ ուրախ-ուրախ ճչալով:

Այժմ արդէն յօժար կամբով ուղևորեց դէպի տուն. Ճամփին նրան հայհոյում էին վարիչները, իսկ իր վարիչը տալիս էր ճիւղտով ու յանդիմանում:

Գողիաթը, որ ասես, ձայն ծալուտ չէր հանում. բայց սրտանց ուրախ էր, որովհետև սիրտը հովացրել էր:

Դեռ երկար ժամանակ շփոթն ու իրարանցումը շարունակւում էր ջրհորի մօտ վարիչները ճշում, աղաղակում էին ու հայհոյում, փղերը խռնւում էին ջրհորի բերանի մօտ, նայում էին ցած և, թալտացող Մուլլին տեսնելով, գոռում էին ցաւակցաբար, մի քանիսը նոյն իսկ կնճիթները մեկնել, կարծես ուզում էին օգնութեան հասնել նրան:

Վերջապէս հասաւ երկաթէ սանդուղք բերին բաղաքից, և Մուլլին բոլորովին անփսաս դուրս եկաւ ջրհորից:

Բայց տէրը սաստիկ բարկացած էր Գողիաթի վրայ. այդ դէպքից յետոյ նա աչքով աչք հունէր Գողիաթին տեսնելու, այնպէս որ վեր առաւ ծախեց

տեղացի Հոսէյին անունով մի վաճառականի։
Հոսէյինը ամբողջ Հնդկաստանում շրջագայում
էր իր փղերով։ Նրանց գործ էին ածուլ դահիճ-
ների տեղակամահապարտներին սպանելու համար։

Գողիաթը բաւական ճանապարհորդեց Հոս-
սէյինի հետ թէ ծովի և թէ ցամաքի վրայ։

Նաւի վրայ սաստիկ սիրեցին բարի Գողիա-
թին։ Նա յաճախ ազատ զբօսնում էր տախտակա-
մածի վրայ ու ոչ ոքի չէր փնասում։ Ընդհակառակը
շուտով նա շատ օգտակար դարձաւ՝ սովորեց նաւի
ճախարակները պտտել ու ծանրութիւններ բարձ-
րացնել։ այդպիսով նա բաւական հեշտացրեց իր
բարեկամ նաւաստի Գասպարի գործը։

Մի օր էլ նաւը կանգ առաւ հնդկական մի
հարուստ քաղաքի առաջ, որտեղ Ալաքսար անու-
նով մի մեծ ռաջի (իշխան) էր ապրում։ Վաճա-
ռականը յոյս ունէր, որ փիղը մեծ գումարով
կծախի Ալաքսար ռաջիին։—Այնպէս որ Գողիաթը
ստիպւած էր ճանփորդներից բաժանւելու։

Երբ նա ցամաք դուրս եկաւ, բոլորը ցաւում
էին նրանից բաժանւելու համար, իսկ Գասպարը
ուղղակի լաց էր լինում։

Հոսէյինի բաղդը բանեց։ Ռաջին հէնց նոր էր
գսպել ստրուկների ապստամբութիւնը, և բանտերը

լի էին մահւան դատապարտած ապստամբներով։

—Շատ լաւ, ասաւ Ալաքսարը Հոսէյինին,
կառնեմ փիղդ։ Նա ինձ կազատի իմ բոլոր դա-
ւաճաններից։ Միայն կարո՞ղ ես երաշխաւորել, որ
քո գոված Գողիաթը հեշտ ու արագ կջախջախի
մահապարտների գլուխները։ Արդեօք բաւակա-
նաչափ ծանր է նրա թաթը։

—Օ՛, տէր—պատասխանեց ստախօս վաճա-
ռականը։—Ի՞նչ ասել կուզի, նայիր այս հսկային,
տես նրա թաթերը։ այնպէս է ջարդում մարդկանց
գլուխները, ասես վայրի ընկոյզներ լինեն։

Մեծ ռաջին հաւատաց վաճառականին։ Եւ
գնեց Գողիաթին տասներկու հատ թանգարժէք
գոհարով։ Հոսէյինը ստանալու պէս անյայտացաւ
բաղաքից, վախենալով որ խաբեքայութիւնը
շուտով կբացւի։ Իսկ ռաջին իր առևտրից գոհ
մնալով, հրամայեց, որ հէնց հետևեալ օրը իրա-
գործեն մահավճիռը։

Վաղ առաւօտից ամբոխը խումբ-խումբ գա-
լիս էր ռաջիին պատկանող բոլոր գիւղերից ու հա-
ւաքում հրապարակը։ Ինքը Ալաքսարը նստած
էր կանաչ դիպակով պատած գահի վրայ։ Նրա
շուրջը կանգնած էին իր խորհրդականները, բրահ-
մինները, դերւիշներն ու զուգւած, զարդարւած

պարող կանայք: Հրապարակի միւս ծայրում հըն-
չում էր երաժշտութիւնն ու երգը:

Ահա հեռում երևացին մահապարտները, նրանք
գալիս էին երկու շարք կազմած, գլուխները բաց,
ձեռքերը յետևից թոկով կապկպած: Մահա-
պարտների կողքից գնում էին իրենց ազգական-
ները արցունքները լուռ ու մունջ կուլ տալով
և հեծկտանքը հապիւ գսպելով, այնպէս սարսա-
փում էին Ալաքսարից: Դատապարտեալները գալով
կանգ առան կառափնարանի առաջ: Դահլճը պառ-
կեցրեց մահապարտներէից մէկին, իսկ վարիչը քաշեց
Գողիաթին դէպի մահապարտի գլուխը ու ասաւ.

— Ա, փիղ, կատարիր մեծ ուշիւի կամբը և
անմիջապէս սպանիր այս ստրուկին, որ զան
ցառու է եղել նրա առաջ:

Գողիաթը մի երկու քայլ արաւ ու վախե-
ցած կանգնեց: Խայտաբղէտ զգեստները, բարձրա-
ձայն երաժշտութիւնը, վայրի ճիչն ու աղմուկը
շշմեցրել էին նրան. շարունակ այս ու այն կողմ
էր նայում շփոթւած:

— Արա ինչ որ հրամայում են, — կրկնեց առաջ-
նորդը: Գողիաթն սկսեց զոդալ ողջ մարմնով:

— Վախւո՛ւկ է եղել, — արհամարհանքով ասաւ
սաջին:

— Հնազանդիր, — բացականչեց վարիչն ահից.
ինքը Ալաքսար տէրը խօսեց քեզ հետ... ինչից
ես վախենում: Չէ որ սա մի ստրուկ է ուշիւի
ձեռքով մահուան դատապարտւած:

Բայց այս ճառերը չկարողացան համոզել
Գողիաթին: Նա տեղից չէր շարժւում:

Ջայրացաւ ուշին:

— Ահա հնազանդ, — ասում էր նա ձեռքերը
ոսկէգօծ գահին խփելով — Պէտք է հնազանդես,
թէ չէ ինքդ էլ կկորչես:

Բայց Գողիաթը կանգնած էր անշարժ հա-
զարաւոր ամբոխի բեկոռած հայեացքների տակ.
ամբոխը շունչը փորը զցած նայում էր, թէ ինչ
կլինի: Գողիաթը ուշադրութիւն չէր դարձնում
խստասիրտ ամբոխի վրայ... Հեզ կապոյտ աչքերը
մահապարտների սգաւոր խմբի վրայ զցած՝ նա-
յում էր կարեկցաբար:

— Ահնճե՛ք եղէք, չեմ սպանի ձեզ. — կարծես
ասում էին այդ աչքերը:

— Դէ, փիղ ջան, — ասում էր առաջնորդը: —
Դէ, մատաղ, հնազանդիր, կատարիր տիրոջ կամբը,
թէ չէ ես էլ չեմ ազատւի մահից:

Յորդորում էր առաջնորդը և գրկում նրա
կնճիթը, փարսում վզին. բայց Գողիաթը, որ

այնպէս սիրում էր դուրգուրանքը, այժմ կանգնած էր անշարժ, մարմինն էր միայն ցնցում, դողում անզադար:

— Անհրաւ, չես հնազանդում հա,— ճշաց առաջնորդը և զայրանալով ձեռքը գցեց իր կողքին կանգնած զինւորի նիզակին.— Ես քեզ ցոյց կտամ,— գոռաց նա բարկացած ու սկսեց վերքեր հասցնել Գողիաթին ուղիղ ականջի յետևը, որովհետև փղի ամենագլայուն մասն է այդ վիրաւորում էր ու ասում:

— Դէ գնա անխիղճ... այնքան փող ենք տուել, առել ենք քեզ, իսկ դու չես էլ ուզում աշխատել: Ես քեզ ի՞նչ եմ արել, որ տիրոջս դայրացնում ես իմ դէմ:

Գողիաթը գոռաց ցաւից, որովհետև ականջները խոցւած էին մինչև ոսկորները, և վերջապէս թաթը բարձրացրեց տախտակամածի վրայ փռւած ստրուկի գլխին:

— Թաթդ օրհնէի,— ասաւ առաջնորդը նիզակը զինւորին յանձնելով: Ախր, գիտէի, որ կը հնազանդես:

Բայց առաջնորդը սխալւում էր՝ Գողիաթը միայն նրա համար բարձրացրեց թաթը, որ զգուշանցնէր մահապարտի գլխի վրայով, երևի նա չէր կարողանում մահապարտի տանջանքներին նայել:

Ժողովուրդը իրար անցաւ, լեղին ջուր կտրեց, որովհետև պարզ էր արդէն, որ Գողիաթի յամառութիւնը անդրդւելի է: Եւ անա Գողիաթը, որ մինչ այդ տխուր տրտում կանգնած էր տախտակամածի վրայ, ուրախ ճիչ արձակեց և մի բանի ուտիւն գործելով կանգնեց իր հին բարեկամ, նաւաստի Գասպարի կողքին, որը եկել էր քաղաքը զիտելու:

— Ի՞նչ է եղել, խեղճ փիղս,— հարցրեց նա շոյելով Գողիաթին:— Ի՞նչ են ուզում քեզանից այս հեթանոսները:

Այն ժամանակ Գողիաթը հեզ զանգատաւորի պէս նայեց նաւաստիին, բռնեց նրա ձեռքը կրնճիթով, մօտեցրեց, դրաւ իր արնոտւած ականջներին ու հառաչեց մեղմիւ:

— Այս ինչո՞ւ են տանջել իմ խեղճ փղին,— հարցրեց Գասպարը իր թարգման հնդկացուն:— Ինչո՞ւ էին կանգնեցրել նրան այն տախտակամածի վրայ:

— Միթէ չես տեսնում,— ասաւ թարգմանը,— նա չի ուզում այն մահապարտի գլուխը ջարդել, ինչպէս հրամայել է Ալաքսարը:

— Գողիաթը երբէք այդպիսի բան չի անի,— բացականչեց Գասպարը յուզւած: — Զէ՛ որ

քրիստոնեաների մէջ է մեծացել, կրթւել նա։ Այդ ժամանակ մեծ ուժի մտերիմ մարդկանցից մէկը մօտեցաւ նաւաստիին և հարցրեց նրան թարգմանի բերանով։

— Ո՛վ օտարական, մեր տէրը հարցնում է քեզ՝ կարո՞ղ ես արդեօք զսպել այս փղին և հնազանդութեան բերել նրան։ Դրա փոխարէն դու մեծ պարգև կստանաս։

— Ասա ու՛շիւ, որ ես պարգև չեմ ուզում, պատասխանեց Գասպարը։— ասա նրան, որ ամօթ է Գողիաթի պէս փղին մարդասպան դարձնելը։

— Ես չեմ կարող, գնա ինքդ ասա, — վրայ բերեց ու՛շիւ մտերիմը։

Այն ժամանակ նաւաստին մօտ գնաց մեծ ու՛շիւի դահին ու ասաւ արձակ, համարձակ։

— Գողիաթը չի կարող մարդասպան դառնալ։ Այնքան բարի է նա, որ ամենևին թշնամի չունի, իսկ դու ուզում ես մարդասպան դարձնել... Ամօթ է, ու՛շիւ։

— Վաճառականն ինձ խաբել է ու ձեռքիցս փախել։— ասաւ ու՛շիւ, նաւաստիի խօսքերը թարգմանի բերանով լսելուց յետոյ։— Ես կըհրամայեմ, որ սպանեն այս փղին։

— Բայց ո՞ր յանցանքի համար, — բացականչեց

նաւաստին։— Մի՞թէ կարծում ես, որ Գողիաթը չի կարող այնքան աշխատել, որքան դու վճարել ես... Նա ջանասէր է ու հնազանդ, երբ վատ բանի չեն դնում իրեն, իսկ այսօր նա առաջինն ու միակն էր, որ ողորմածութեան օրինակ եղաւ քեզ... Օ՛հ, ու՛շիւ։ Այժմ պէտք է ներեալ յանցաւորներին՝ մի՞թէ դու մարդ տեղովդ դադանից էլ աւելի վայրագ ես ուզում լինել։

Ալաքսարը սկզբում դայրագին հայեացք ձգեց համարձակիսօս օտարականի վրայ. բայց յետոյ դուրս ձեռքի մէջ առաւ. մահապարտների սրտերը ուղղակի մարեցին մեծ ու՛շիւի այդ կարճատև մոմառութից։

— Նա ճիշտ է ասում։— բացականչեց ու՛շիւ ոտքի կանգնելով։— Մահապարտները աղատ են։ Հնդկաստանի տէրը մի՞թէ աւելի վայրագ է, քան այս դադանը։

Ժողովուրդը ցնծալից աղաղակներով ողջունեց ու՛շիւի այս խօսքերը։ Ազատաձմահապարտները չէին համարձակում մօտենան անեղ Ալաքսարին, որ շնորհակալութիւն յայտնել նրան։ Բայց սիրով փարւում էին Գողիաթի ոտներին, համբուրում էին նրա կնճիթից ու իրենց փրկիչն էին անւանում նրան։

Առաջնորդը այժմ ամաչում էր իր արարքից,
աշխատում էր փաղաքշանքով մոռացնել տալ
Գողիաթին իր խստասրտութիւնը:

— Ա. բեգ մատաղ, ներիր ինձ և ընդունիր
այս պարգևը — ասում էր նա երկու խնձոր տալով
բարեսիրտ Գողիաթին:

Բայց Գողիաթը վեր առաւ խնձորները, գցեց
գետինն ու կոխոտեց. իսկ երբ առաջնորդը դրա-
նից յետոյ էլ շարունակեց իր փաղաքշանքները,
Գողիաթը էլ հանաք չարաւ՝ թոցրեց նրա գլխարկը
և պատառ-պատառ անելով, շարտեց երեսին: Ապա
յետ քաշեց, մօտեցաւ իր բարեկամ Գասպարին,
քնքուշ փաթաթեց նրան կնճիթով, կարծես
շնորհակալութիւն էր յայտնում համարձակ պաշտ-
պանութեան համար:

Ռաշին էլ սիրեց Գասպարին: Նա առաջար-
կեց, որ Գասպարը Գողիաթի առաջնորդը դառնայ,
նաւաստին մեծ ուրախութեամբ համաձայնեց:

Այնուհետև փրդն ու Գասպարը երկար տա-
րիներ ապրում էին անբաժան: Գասպարը մեռաւ
խորին ծերութեան մէջ, և Գողիաթը իր սիրելի
բարեկամի մահից յետոյ էլ չէր մխիթարւում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0392143

2724

«Ի Մ Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ը»

Հրատ. «ԶՈՐՍ ԳՈՅՐԵՐԻ»

Լոյս են տեսել.

- № 1 Տէրտէրն ու իր Բալդի ծառան 1 կոպ
- № 2 «Եստասէր Հսկայ» 1 կոպ
- № 3 «Գող մաքին» (պատկերազարդ) 1 կոպ
- № 4 «Կարմրավզիկ» 1 կոպ
- № 5 «Ողորմած թշնամու աղբիւր» — Սոխակի
երգը 1 կոպ
- № 6 «Երկու առակ» 1 կոպ
- № 7 «Զարմանալի որդ» (պատկերազարդ) . . . 2 կոպ
- № 8 «Վայրի կարապներ» 1 կոպ
- № 9 «Բարեսիրտ Գողիաթը» 1 կոպ

Գիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „ГИРЪ
Седраку Аветянъ.

891.716

F-42